ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի № 1015-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N -

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ

ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի № 1015-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի «Ոչ պարենային արտադրանքի տեխնիկական կանոնակարգերի վերանայման պլանավորման ծրագիրը հաստատելու մասին» № 1015-Ն որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

- Ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 14-րդ կետը:
- Հավելվածի 2-րդ, 7-րդ և 24-րդ կետերի «Իրավական ակտի վերանայման վերջնաժամկետը» 6-րդ սյունյակում «2020 թ.» բառերը փոխարինել «2022 թ.» բառերով:
- Հավելվածի 16-րդ կետի «Իրավական ակտի վերանայման վերջնաժամկետը» 6-րդ սյունյակում «2019 թ.» բառերը փոխարինել «2023 թ.» բառերով, իսկ «Իրավական ակտի նախագիծը վերանայելու համար պատասխանատու պետական մարմնի անվանումը» 5-րդ սյունակում «ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն» բառերով:
- Հավելվածի «Ֆինանսավորման աղբյուրը» 7-րդ սյունակում բոլոր կետերում «պետական բյուջե, դրամաշնորհներ, միջազգային դոնոր կազմակերպություններ» ձևակերպումից հանել «դրամաշնորհներ» բառը:
- Հավելվածի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 13-րդ և 24-րդ կետերում

«տնտեսական զարգացման և ներդրումների», «բնապահպանության», «էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների» և «տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերը փոխարինել համապատասխանաբար «էկոնոմիկայի», «շրջակա միջավայրի» և «տարածքային կառավարման և ենթակառուցվածքների» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ